ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2014թ. թիվ 145-Ա

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի ԹԻՎ 141-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշման 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության մարզային (Երևան քաղաքի) բնակչության պաշտպանության պլանի կառուցվածքը և բովանդակությունը հաստատելու մասին» 15.11.2013թ. N 1032-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 01.04.2014թ. N 8/17.4/2733-14 գրությամբ տրված համաձայնությունը, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կատարումն ապահովելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Լոռու մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) Գառնիի ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում երկրաշարժի ուժգնության աղյուսակը՝ ըստ msk-64 սանդղակի՝ համաձայն N 2 հավելվածի.
3) ՀՀ Լոռու մարզի տարածքի վտանգավոր օբյեկտներում վթարի դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 3 հավելվածի.
4) ուժեղ երկրաշարժի հետևանքով մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 4 հավելվածի.
5) ուժեղ երկրաշարժի հետևանքով հնարավոր սանիտարական կորուստների հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի.
6) ուժեղ երկրաշարժի հետևանքով ստեղծված հրդեհային իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 6 հավելվածի.
7) ուժեղ երկրաշարժի հետևանքով ստեղծված ինժեներական իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) ուժեղ երկրաշարժից ՀՀ Լոռու մարզի համայնքների համար պահանջվող փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի.
9) Վանաձոր քաղաքի շենք-շինությունների սեյսմիկ ռիսկի գնահատումը՝ համաձայն N 9 հավելվածի.
10) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ «ՍՊՀսԾ» ՊՈԱԿ) ՀՀ Լոռու մարզում գտնվող դիտարկումների ցանցը՝ համաձայն N 10 հավելվածի.
11) ՀՀ Լոռու մարզում սեյսմիկ դիտարկումների ցանցի կառուցվածքը՝ համաձայն N 11 հավելվածի.
12) Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր և Ալավերդի քաղաքների տարածքների շենքերի վնասվելու սեյսմիկ ռիսկի, Ախթալա քաղաքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանցման, կառուցապատման շրջանցման և շենքերի վնասվելու ռիսկի քարտեզները՝ համաձայն N 12 հավելվածի.
13) ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N 13 հավելվածի.
14) ՀՀ Լոռու մարզի կապի կազմակերպման սխեման՝ համաձայն N 14 հավելվածի.
15) ՀՀ Լոռու մարզի ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 15 հավելվածի.
16) ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի ազդարարման սխեման՝ համաձայն N 16 հավելվածի.
17) ՀՀ Լոռու մարզային փրկարար վարչության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 17 հավելվածի.
18) ՀՀ Լոռու մարզի հետախուզության կառավարման սխեման՝ համաձայն N 18 հավելվածի.
19) ՀՀ Լոռու մարզում անօթևան մնացած բնակչության տարահանման և կացարաններով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 19 հավելվածի.
20) Սպիտակի երկրաշարժի դեպքում անօթևան մնացած բնակչության տեղաբաշխումը ըստ տարահանման վայրերի և տարահանման երթուղիների՝ համաձայն N 20 հավելվածի.
21) ՀՀ Լոռու մարզում տարահանվողների ընդունման կետերի հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 21 հավելվածի.
22) ՀՀ Լոռու մարզում երկրաշարժի հետևանքների վերացման պլան–ժամանակացույցը՝ համաձայն N 22 հավելվածի.
23) Բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն N 23 հավելվածի.
24) տուժած բնակչության և փրկարարական ուժերի՝ սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 24 հավելվածի.
25) տուժած բնակչության՝ հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 25 հավելվածի.
26) ՀՀ Լոռու մարզում գտնվող խմելու ջրի մատակարարման ավազանների (կապտաժների) վերաբերյալ տվյալները՝ համաձայն N 26 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի օգոստոսի 7-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» թիվ 141-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. ապրիլի 17
ք.Վանաձոր